

# Փոխմարզպետ Դավիթ Սամսոնյանն ընդունեց Հայաստանում ԻԻՀ ղեսպանության առաջին քարտուղարին

05.03.2015

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Դավիթ Սամսոնյանն այսօր ընդունեց Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության զեսպանության առաջին քարտուղար Ռեզա Մոսթաֆային, որի հետ էր նաև Իրանի Քուրդ քաղաքի ֆերմերային ասոցացիայի ներկայացուցիչ Վալքա Ղասեմյան:

Հանդիպմանը մասնակցում էին նաև ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը և մարզի Բաղրամյանի տարածաշրջանի համայնքների ղեկավարները:

Իրանական կողմը հետաքրքրված էր Բաղրամյանի տարածաշրջանում պայմանագրային հիմունքներով մշակովի հողատարծքներ ձեռք բերելու և բանջարեղևատանային կուլտուրաների մշակությամբ զբաղվելու հանարավորություններով:

Ներկայացնելով առկա հնարավորությունները՝ մի քանի համայնքապետեր պատրաստակամություն հայտնեցին ընդհանուր պայմանների շուրջ համաձայնության գալու դեպքում իրանական կողմին ժամանակավոր մշակության հանձնել շուրջ 1200-1300 հա հողատարածք:

Կողմերը պայմանավորվածություն ձեռք բերեցին հանդիպելու համապատասխան համայնքներում և տեղերում քննարկելու իրենց հետագա անելիքները: